

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխտորֆ

Առաջին Նախագահության առաջին
խորհրդակալ



Ապրել աշակերտի կյանքով

Երեսուն տարի առաջ Գանայում Դոյ անունով քոլեջի մի երիտասարդ ուսանողուհի առաջին անգամ ոտք դրեց ՎՕՍ ժողովատուն: Ընկերներից մեկը հրավիրել էր Դոյին գալ իր հետ, և նրան հետաքրքրել էր, թե ինչպիսին է Եկեղեցին:

Մարդիկ այնտեղ այնքան սիրալիր էին, որ նա սկսեց հետաքրքրվել. «Ինչպիսի՞ էկեղեցի է սա»:

Դոյն այնքան տպավորված էր, որ որոշեց ավելին իմանալ Եկեղեցու և դրա ժողովրդի մասին, ովքեր լցված էին այդքան մեծ ուրախությամբ: Բայց երբ նա սկսեց այդպես վարվել, ընտանիքի անդամներն ու ընկերները, ովքեր նրան շատ էին սիրում, ամեն քայլափոխի սկսեցին դեմ գնալ նրան: Նրանք սարսափելի բաներ էին ասում Եկեղեցու մասին և անում էին ամեն բան նրան հիասթափեցնելու համար:

Սակայն Դոյը վկայություն էր ստացել:

Նա հավատում էր, սիրում էր ավետարանը, ինչը նրա կյանքը լցնում էր ուրախությամբ: Ուստի, նա մտավ մկրտության ջուրը:

Դրանից հետո նա ընկղմվեց ուսումնասիրության և աղոթքի մեջ: Նա ծով էր պահում ու փնտրում Սուրբ Հոգու ազդեցությունն իր կյանքում: Արդյունքում Դոյի վկայությունը և հավատն ավելի ամրացան ու խորացան: Ի վերջո, նա որոշեց ծառայել լիաժամկետ միսիա Տիրոջ համար:

Միսիայից վերադառնալուց հետո նա ծանոթանում և ամուսնանում է վերադարձած միսիոներին հետ, հենց այն միսիոների, ով տարիներ առաջ մկրտել էր իրեն, իսկ ավելի ուշ նրանք կնքվում են Հարավային Աֆրիկայի Յոհաննեսբուրգ Տաճարում:

Շատ տարիներ են անցել այն օրվանից, երբ Դոյ Կակուն առաջին անգամ զգաց Հիսուս Քրիստոսի ավետարանի ուրախությունը: Այդ տարիների ընթացքում կյանքը միշտ չէ, որ քաղցր է եղել նրա համար: Նա տարել է իր բաժին վիշտն ու հուսահատությունը, ներառյալ երկու երեխաների կորուստը. այդ փորձառությունների խորը վիշտը դեռևս ծանրացած է նրա սրտի վրա:

Սակայն նա և նրա ամուսինը՝ Էնթոնին, ձգտել են մոտենալ իրար և իրենց սիրելի Երկնային Հորը, ում նրանք սիրում են իրենց ողջ սրտով:

Այսօր՝ մկրտության ջուրը մտնելուց 30 տարի անց, Քույր Կակուն վերջերս ավարտեց մեկ այլ լիաժամկետ միսիա, այս անգամ իր ամուսնու հետ միասին, ով միսիայի նախագահ էր Նիգերիայում:

Նրանք, ովքեր ճանաչում են Քույր Կակունին, ասում են, որ նա շատ յուրահատուկ կին է: Նա շողում է: Երբ նրա հետ ժամանակ եք անցկացնում, ավելի երջանիկ եք ձեզ զգում:

Նա ունի հավաստի վկայություն. «Ես գիտեմ, որ Փրկիչն ընդունում է ինձ որպես Իր դուստր և ընկեր

(տես Մոսիա 5.7, Եթեր 3.14),- ասում է նա: «Եվ ես սովորում եմ ու ջանասիրաբար փորձում եմ նույնպես լինել Նրա ընկերը՝ ոչ միայն իմ խոսքերով, այլև իմ գործերով»:

Մենք աշակերտներ ենք

Քույր Կակուի պատմությունը նման է շատերի պատմությանը: Նա ցանկանում էր իմանալ ճշմարտությունը, նա վճարեց հոգևոր լույս ունենալու գինը, նա իր սերը ցուցաբերեց Աստծո և իր մերձավորների հանդեպ, և այդ ճանապարհին նա ունեցավ դժվարություններ ու վիշտ:

Մակայն, անկախ ընդդիմությունից ու վշտից, նա շարունակեց առաջ շարժվել հավատով: Նույնքան կարևոր է նաև այն, որ նա շարունակեց ուրախ լինել: Նա ուղի գտավ ոչ միայն դիմակայել կյանքի դժվարություններին, այլև բարգավաճել, անկախ դրանցից:

Նրա պատմությունը նման է իմ և ձեր պատմությանը:

Հազվադեպ է մեր ճամփորդությունը հարթ կամ առանց փորձության ընթանում:

Մեզանից յուրաքանչյուրն ունի խոր վիշտ, հիասթափություն, դժվարություններ:

Մենք նույնիսկ կարող ենք հուսալքվել և երբեմն էլ՝ ճնշվածություն զգալ:

Մակայն նրանք, ովքեր ապրում են աշակերտի կյանքով, ովքեր հավատարիմ են մնում և շարունակում առաջ շարժվել հավատով,¹ ովքեր ամեն օր ու ամեն ժամ ապրում են ավետարանով, ովքեր Քրիստոսանման ծառայություն են մատուցում իրենց շուրջը գտնվողներին, կատարելով հերթական բարի գործը, նրանց փոքր գործերը հաճախ առաջ են բերում մեծ փոփոխություններ:

Նրանք, ովքեր մի փոքր ավելի բարի են, ավելի ներող, ավելի ողորմած, ողորմածներն են, ովքեր ողորմություն կգտնեն:² Նրանք, ովքեր այս աշխարհը ավելի լավն են դարձնում, երբեմն կատարելով հոգատար և սիրալիք գործողություններ, ձգտում են ապրել Հիսուս Քրիստոսի աշակերտի օրինված, գոհացնող և խաղաղարար կյանքով, ի վերջո ուրախություն կգտնեն:

Նրանք կիմանան, որ «Աստծո սերը, որը տարածվում է ամենուր՝ մարդկանց զավակների սրտերում . . . ամենաբաղձալիկ է բոլոր բաներից ավելի . . . և հոգու համար ամենաբերկրալիկ»:³

ՀՂՈՒՆԵՐ

- 1. Տես Մոսիա 4.6:
- 2. Տես Մատթեոս 5.7:
- 3. 1 Նեփի 21.22-23

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Ուխդորֆն ուսուցանում է մեզ, որ աշակերտության ուղին դժվարին է, սակայն նրանք, ովքեր ապրում են «Հիսուս Քրիստոսի աշակերտի խաղաղարար կյանքով, ի վերջո ուրախություն կգտնեն»: Ճիշտ այնպես, ինչպես Նախագահ Ուխդորֆը պատմում է Դոյի պատմությունը, որպեսզի ցույց տա, թե ինչպես կարող է Քրիստոսի իրական աշակերտը խաղաղություն և ուրախություն գտնել՝ անկախ կյանքի դժվարություններից, դուք նույնպես, կարող եք կիսվել ձեր կյանքի որևէ պատմությամբ այն մասին, թե ինչու եք ընտրել հետևել Քրիստոսին, և ինչպես է Նա ուժ տվել ձեզ: Երբ դուք առաջնորդվեք Հոգով, անձնական պատմություններով կիսվելը կարող է ամրացնել նրանց, ում ուսուցանում եք:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ուրախություն գտնել որպես Հիսուս Քրիստոսի աշակերտ

Դուք երբևէ ունեցե՞լ եք վատ օր: Ի՞նչ եք արել ուրախանալու համար: Նախագահ Ուխդորֆը գիտի, որ «Մեզանից յուրաքանչյուրն ունի խոր վիշտ, հիասթափություն, դժվարություններ: Մենք նույնիսկ կարող ենք հուսալքվել, իսկ երբեմն էլ՝ ճնշվածություն զգալ»:

Նա առաջարկում է, ինչպես ինքն է ասում, ապրել «աշակերտի կյանքով», «հավատարիմ մնալ և շարունակել առաջ գնալ հավատով»: Երբ մենք առաջ ենք շարժվում հավատով, կարողանում ենք վստահել Աստծուն, պահել Նրա պատվիրանները, ծառայել ուրիշներին և ուրախություն զգալ այդ ամենի ընթացքում: Ինչպես ասում է Նախագահ Ուխդորֆը. «Նրանք, ովքեր ապրում են աշակերտի կյանքով . . . նրանք են, ում փոքր գործերը հաճախ առաջ են բերում մեծ փոփոխություններ»:

Կազմեք ցուցակ , թե դուք ինչպես կարող եք ապրել աշակերտի կյանքով: Օրինակ, դուք կարող

եք գրի առնել ծառայության հետ կապված մտքեր, ինչպես օրինակ՝ «Օգնել ծնողներին ընթրիք պատրաստել» կամ պատվիրանները պահելու հետ կապված միտք, ինչպես օրինակ՝ «Աղոթել քրոջ կամ եղբոր հետ ավելի համբերատար լինելու համար»: Երբ հաջորդ անգամ հիասթափություն կամ ճնշվածություն զգաք, հանեք ձեր ցուցակը, ընտրեք մի գաղափար և փորձեք այն:

ԵՐԵՒԱՆԵՐ

Ուրախ ու տխուր ժամանակներ

Որոշ օրեր ունեն իրենց ոչ այնքան ուրախ պահերը: Եվ դա բնական է: Հիսուսը կարող է օգնել ձեզ այդ պահերին:

Նկարեք տխուր դեմք: Ինչպե՞ս կարող է Հիսուսն օգնել ձեզ, երբ դուք տխուր եք: Այժմ նկարեք ուրախ դեմք: Ինչպե՞ս կարող է Հիսուսն օգնել ձեզ ուրախ լինել:



**Հավատք, Ընտանիք,
Սփոփանք**

Ապրել՝ նվիրաբերելով կյանքը

Աղոթքով ուսումնասիրեք այս կյոթը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: Ինչպե՞ս կարող է Սփոփող Միության նպատակի ըմբռնումը Աստծո նրատրերին պատրաստել հավերժական կյանքի օրհնությունների համար:

«Նվիրաբերել նշանակում է «Նի սպաս դնել կամ նվիրել ինչ-որ սրբազան բան սուրբ նպատակների համար», - ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնը: «Իրական հաջողությունն այս կյանքում գալիս է, երբ մեր կյանքը, այսինքն՝ մեր ժամանակն ու ընտրությունները, նվիրաբերում ենք Աստծո նպատակներին»:¹

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելն (1926–2004) ասել է. «Մենք հավված ենք մտածել նվիրաբերման մասին որպես լոկ ինչ-որ բան տալու, երբ Աստծո կողմից առաջնորդվելով, տալիս ենք մեր նյութական ունեցվածքը: Մակայն ամենամեծ նվիրաբերումը մեր անձերն Աստծուն տալն է»:²

Երբ մենք մեզ նվիրաբերենք Աստծո նպատակներին, մեր հավատն առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը կմեծանա: Երբ մենք ապրենք՝ նվիրաբերելով մեր

կյանքը, մենք կարող ենք սուրբ դառնալ այդ արարքների միջոցով:

Սփոփող Միության Նախագահության Առաջին Խորհրդական Քերոլ Մ. Սթեֆենսն ասել է. «Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է. «Երբ մենք կապում և պահում ենք ուխտեր, մենք դուրս ենք գալիս աշխարհից և մտնում Աստծո թագավորություն»:

Մենք փոխվում ենք: Մենք այլ տեսք ենք ձեռք բերում, մենք այլ կերպ ենք գործում: Այն, ինչ մենք լսում ենք, կարդում և ասում ենք, տարբեր է, այն, ինչ հագնում ենք, նույնպես տարբեր է, որովհետև մենք դառնում ենք Աստծո դուստրերը՝ Նրա հետ ուխտով կապված»:³

Նվիրաբերումը ուխտ է, որն Աստված կապում է «Իսրայելի տան հետ այն օրերից յետոյ, ասում է Տէրը. Իմ օրենքը պիտի դնեմ նորանց ներսումը, եւ նորանց սրտի վերան պիտի գրեմ այն, եւ ես պիտի լինեմ նորանց Աստուած

եւ նորանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն» (Երեմիա ԼԱ.33): Նվիրաբերված կյանքով ապրելը համահունչ է մեզ հետ կապված Աստծո ծրագրին:

Լրացուցիչ սուրբ գրություններ

Ա Թեսաղոնիկեցիս 1.3, Վարդապետություն և Ուխտեր 105.5; reliefsociety.lds.org

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դ. Թող Քրիստոֆերսոն, «Մտորումներ նվիրաբերված կյանքի մասին», *Liahona*, նոյ. 2010, 16:
2. Neal A. Maxwell, "Consecrate Thy Performance," *Liahona*, July 2002, 39.
3. Քերոլ Մ. Սթեֆենս, «Արթնանանք մեր պարտականության մեջ» *Liahona*, նոյ. 2012, 115–16:

Խորհեք այս մասին
Մեր կյանքը Տիրոջը նվիրաբերելով, ինչպե՞ս ենք ավելի սմանվում Նրան: